

13.09.2017թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Արմավիրի մարզի
բուժհաստատությունների տնօրենների ամենամսյա խորհրդակցության

Մասնակցությամբ մարզպետարանի ենթակայության և մարզի համայնքային բժշկական հաստատությունների տնօրենների, մարզի ինֆեկցիոնիստների, համաճարակաբանների, վարակաբանների մանկաբույժների:

Հրավիրված էին մասնագետներ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի» հատուկ վտանգավոր վարակների մանրէաբանական լաբորատորիայի բժիշկ-մանրէաբաններ՝ Լուսինե Ասատրյանը և Հոփսիմե Հակոբյանը:

Ողջունելով խորհրդակցության մասնակիցներին «Արմավիրի փոխմարզպետ տիկին Լ. Մուրադյանը հրավիրեց բոլորի ուշադրությունը տարածաշրջանում հատուկ վտանգավոր ինֆեկցիաների հանդեպ ուշադրության բարձրացմանը՝ մասնավորապես խոլերայի պրոֆիլակտիկային վերաբերվող բոլոր հարցերին, հանձնարարելով աղիքային ինֆեկցիայի յուրաքանչյուր դեպքերը դիտարկել որպես խոլերա և պարտադիր հետազոտել այդ առումով: Շարունակելով խորհրդակցությունը տիկին Մուրադյանը անդրադարձավ մարզի զինհաշմադամներին դարձվող ուշադրությանը՝ հանձնարարելով այդ մարդկանց հանդեպ ավելի ու ավելի ուշադիր լինել և այդ ուշադրությունը լինի միշտ ոչ թե միայն հաշվետվությունը ներկայացնելու համար հերթական այցելության ձևով:


Ինչպես յուրաքանչյուր խորհրդակցությանը այս անգամ ևս տիկին Մուրադյանը ներկայացրեց ամսվա ընթացքում «ԱՆ-ից ստացված գրությունները, որոնք մեր կողմից շրջաբերականների ձևով ուղարկվել են՝ նորից ու նորից բոլորին հանձնարարելով լինել ուշադիր ժամանակին պատասխանել դրանց, ինչպես նաև տեղեկացրեց բոլորին «Մինչև 2 ամսական հիվանդ նորածինների վարումը առողջության առաջնային պահպանման հաստատություններում» թեմայով դասընթացներ կազմակերպելու մասին» հրամանի վերաբերյալ, որի համաձայն պլանավորված է իրականացնել ս/թ նոյեմբեր ամսին Արմավիրի և Վաղարշապատի տարածաշրջաններում դասընթացներ, որի հստակ օրերի վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացվի: Հաջորդ նորությունը որ ներկայացրեց տիկին Մուրադյանը դա ընտանեկան բժշկության 5-րդ միջազգային գիտաժողովի վերաբերյալ էր նվիրված ԵՊԲՀ ընտանեկան բժշկության ամբիոնի 20-ամյակին, որը կկայանա սեպտեմբերի 29-ին և 30-ին Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի նիստերի մեծ դահլիճում՝ հանձնարարելով ցանկության դեպքում մարզի բժկներին ներկա լինել գիտաժողովին, ինչպես նաև տեղեկացրեց, որ սեպտեմբերի 29-ին «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում կայանալիք քննարկում՝ Արմավիրի մարզի ենթակայության տուբերկուլոզի ախտորոշում և բուժում իրականացնող բժշկական կազմակերպությունների ֆթիզիատորների մասնակցությամբ՝ 2016 և 2017թ-ի 1-ին կիսամյակի ընթացքում տուբերկուլոզի կառավարման ազգային ծրագրի իրականացման վերաբերյալ: Տիկին Մուրադյանը ներմարզային հակադիաբետիկ դեղորայքի բաշխմանը

անդրադառնալով մասնավորապես ինսուլիններին՝ խստորեն հանձնարարեց ճիշտ հաշվարկել և ներկայացնել դեղորայքի ծախսն ու պահանջը որպեսզի ՀՀ ԱՆ-ից մարզին հատկացված քանակները բավարարի և եռամսյակի ընթացքում դեղորայքի խնդիր մարզում չառաջանա: Նաև զգուշացրեց բուժհաստատություններին, այն դեպքերում երբ օտարերկրյա մասնագետներ կիրավիրվեն կամ կդիմեն աշխատանքի համար անհրաժեշտ է, որ ունենան ՀՀ ԱՆ-ի թույլատվություն, այլապես բուժհաստատությունը կկրի պատասխանատվություն: Ինչպես նաև զգուշացրեց բոլորին, այն դեպքերում, երբ դիմում է քաղաքացին ինչ որ վնասվածքով անհրաժեշտ է հայտնել ոստիկանություն յուրաքանչյուր դեպքի համար: Ապա խոսքը փոխանցվեց խոլերա հիվանդության վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն ստանալու նպատակով տիկին Մուրադյանը առաջարկեց լսել «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի» հատուկ վտանգավոր վարակների մանրէաբանական լաբորատորիայի բժիշկ-մանրէաբաններին: Հրավիրվածները ներկաներին մանրամասն ներկայացրեցին խոլերա հիվանդության համաճարակային իրավիճակն ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանի հանրապետությունում, մասնավորապես Արմավիրի մարզում: Անցկացվեց սեմինար պարապմունք՝ ներկայացնելով դիտակտիկ նյութեր, խոլերա հիվանդության վաղ հայտնաբերման, կլինիկական ախտորոշման, բուժման, կանխարգելման, խոլերա հիվանդության կասկածով հիվանդից նյութի վերցման, տեղափոխման, լաբորատոր հետազոտությունների իրականացման, ազգաբնակչության շրջանում բժշկական ու հիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի քարոզչության վերաբերյալ:

Ավարտելով օրակարգային հարցերի քննարկումները՝ տիկին Մուրադյանը խորհրդակցությունը համարեց ավարտված:

«Արմավիրի մարզպետի տեղակալ՝

Արձանագրող՝ Ա. Բեգլարյան



Լ. Մուրադյան